

## ՈՒՂԵԳՐՈՒԹԻՒՆԸ

Ուղեգրութեանս ձեռագիրը կը պահուի այժմ Լվովի Համալսարանի Մատենադարանին մէջ, ի շարս հայերէն ձեռագիրներու եւ կը կրէ 58 համարը: Նկարագրութիւնն է.

Թուղթք՝ 198 (= 396 էջ): Մեծութիւն՝  $15,3 \times 10$  սմ.: Գրչութիւն՝  $12 \times 7,2$  սմ.: Տողք՝ 24: Նիւթ՝ թուղթ: Կազմ՝ կաշի բաց կարմիր գունով: Գիր՝ նոտր մէտ շղագրի: Հանգամանք՝ լաւ: Դատարկ թուղթեր՝ էջ 206, 289 (կէս էջէն) մինչեւ 396. Երկու դատարկ թուղթ նաեւ սկիզբն եւ վերջը իբրեւ պահպանակ դրուած: Սորան, զարդադիր են չունի: Գրուած է միահետ գրչութեամբ. հատուածներու սկզբնատուերը, կ'երեւայ կարմրագիր գրելու համար, թողուած են անգիր: Գրիչ եւ Տէր՝ հեղինակը Սիմէոն դպիր Լեհացի (Չամոսցացի): Տեղի՝ հաւանօրէն Լվով: Ժամանակ՝ 1619—1635:

Սիմէոն Լեհացոյ այս Ուղեգրութիւնը համասեռ գրականութեան մէջ մէկ հատիկն է թէ՛ իւր բնդարձակութեամբը, թէ՛ լայն աշխարհածանօթութեամբն եւ թէ՛ հայ կեանքի վրայ ճոխ հաղորդագրութեամբը:

Ունինք նախանցեալ շրջանէն Հեթում Կոռիկոսցի մը, որ դէպի Թաթարաց աշխարհ դիպուածալից ճանապարհորդութիւնը նկարագրած է. ունինք դարձեալ Սաչատուր Եւգոկիացի (ա՛յսպէս, եւ ո՛չ Եքովպացի) մը